ՏԻՐՈՋ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՏԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. Դ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ 13:14-19

14 Երբ Եղիսեն հիվանդացավ այն հիվանդությամբ, որից էլ մեռնելու էր, Իսրայելի Հովաս թագավորն իջավ նրա մոտ, լաց եղավ նրա վրա ու ասաց. Հայր իմ, հայր իմ. Իսրայելի կառքը և նրա ձիավորները: 15 ***Եղիսեն ասաց*** *նրան. Մի աղեղ և նետեր վերցրու: Եվ նա մի աղեղ ու նետեր վերցրեց: 16* ***Եղիսեն ասաց*** *Իսրայելի թագավորին. Ձեռքդ ամրացրու աղեղիդ վրա: Նա ձեռքն ամրացրեց, և Եղիսեն իր ձեռքը դրեց թագավորի ձեռքի վրա:* ***Եվ ասաց.***

- *Ձեռքերը ձեռքերի վրա: Երիտասարդների ուժը, ծերերի ուղղությունը: Երիտասարդների եռանդը, ծերերի իմաստությունը: Ձեռքերը ձեռքերի վրա խորհրդանշում են գերբնական ձեռքեր: Գերբնական ձեռքեր, որոնք դիպչում են բնական ձեռքերին:*

17 Բա՛ց պատուհանը դեպի արևելք, և նա բացեց: Եղիսեն ասաց. Նետն արձակի՛ր: Եվ նա արձակեց նետը: Եղիսեն էլ ասաց. Տիրոջ փրկության նետն է, ասորիների դեմ փրկության նետը: Դու ասորիներին պիտի հաղթես Ափեկում և մինչև վերջ ջնջես նրանց:

I. ԱՅՍՕՐ ԱՌՁԱԿԻՐ ՏԻՐՈՋ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՏԸ:

Եսայի 55:11 – այնպես էլ կլինի <u>իմ բերանից դուրս եկած խոսքը</u>. նա ապարդյուն չի վերադառնա ինձ մոտ, այլ կկատարի իմ փափագը և հաջողություն կունենա այն բանում, ինչի համար ես ուղարկել եմ նրան:

Եսայի 49:2 – Նա իմ բերանը դարձրել է <u>սրած թրի նման</u>, ինձ ծածկել է իր ձեռքի հովանու տակ, փայլուն նետ է շինել ինձ և թաքցրել իր կապարճում:

18 ***Եվ ասաց.*** *Վերցրու՛ նետերը, և նա վերցրեց:* ***Եվ ասաց*** *Իսրայելի թագավորին. Խփի՛ր գետնին: Եվ նա երեք անգամ խփեց գետնին ու կանգնեց: 19 Եվ Աստծու մարդը բարկացավ նրա վրա և ասաց. Հինգ կամ վեց անգամ պետք է խփեիր. այն ժամանակ ասորիներին այնպես կխփեիր, որ նրանք վերջանային, իսկ հիմա միայն երեք անգամ ես խփելու:*

- *Պետք է հասկանանք, թե ինչի հետ գործ ունենք: Սա մի ազգի կռիվ չէ մյուսի դեմ: Սա ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ Է:*

II. ԳԵՏՆԻՆ ՀԱՐՎԱԾԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՀԱՄԱՌ ԱՂՈԹՔԻ ԿՅԱՆՔ ՈՒՆԵՆԱԼ:

Սացմոս 11:2-3 – 2 Որովհետև ահա ամբարիշտներն աղեղ են լարում և իրենց նետերն են պատրաստում լարի վրա, որ խավարում խփեն նրանց, ***<u>ովքեր ուղիղ են սրտով</u>****: 3 Եթե հիմքերը քանդվեն, արդարն ի՞նչ պիտի անի:*

18 ***Եվ ասաց.*** *Վերցրու՛ նետերը, և նա վերցրեց:* ***Եվ ասաց*** *Իսրայելի թագավորին. Խփի՛ր գետնին:*

Եսայի 54:17 – Ամեն մի գործիք, որ շինված է քո դեմ, հաջողություն չպիտի ունենա, և ամեն լեզու, որ դատաստանի է ելնելու քո դեմ, պիտի դատապարտվի:

- *Դ Թագ. 5:10 – Եղիսեն պատգամավոր ուղարկեց նրա մոտ՝ ասելով. Գնա՛ և **յոթ անգամ** լվացվի՛ր Հորդանանում, և քո մարմինը կվերադառնա քեզ մոտ, ու կմաքրվես:*

- *Հեսու 6:16 – **Յոթերորդ անգամ**, երբ քահանաները հնչեցրին փողերը, Հեսուն ասաց ժողովրդին. Աղաղակե՛ք, որովհետև Տերն այս քաղաքը ձեզ է տվել:*

- *Գ Թագ. 18:43-44 – Եվ ասաց իր ծառային. Ելի՛ր և գնա նայի՛ր դեպի ծովի կողմը. և նա ելավ գնաց ու նայեց և ասաց. Ոչ մի բան չկա: **Եվ Եղիան յոթ անգամ ասաց**. Դարձյալ գնա, յոթ անգամե: Եվ յոթերորդ անգամ ասաց. Ահա մարդու ձեռքի չափ մի փոքր ամպ է բարձրանում ծովից: Եվ Եղիան ասաց. Գնա ասա՛ Աքաաբին. "Լծի՛ր կառքդ և իջի՛ր, որ անձրևը չբռնի քեզ:*

- *Ինձ հիշեցնում է նաև Դանիելին. Ինչպես բաց պատուհանից նետեր արձակելով, նա աղոթում էր՝ դեպի Երուսաղեմ: Աղոթում է, որ փրկության նետը դիպչի իր հողին:*

  «Մենք աղոթում ենք այս ամրոցի դեմ…»:

Արդյո՞ք ես բավականաչափ հարվածեցի գետնին:

Եփ. 6:10-13 – 10 Այսուհետև զորացե՛ք Տիրոջով ու նրա զորության ուժով: 11 Եվ Աստծու սպառազինությա՛մբ զգեստավորվե՛ք, որպեսզի կարողանաք սատանայի հնարներին դիմադրել: 12 Որովհետև մեր պատերազմն արյան և մարմնի դեմ չէ, այլ իշխանությունների և պետությունների դեմ, այս խավար աշխարհի տիրակալների դեմ, երկնքում գտնվող չար ոգիների դեմ: 13 Դրա համար Աստծու սպառազինությունը վերցրեք, որ չար օրը կարողանաք դիմադրել ու ամեն բան հաղթահարելով՝ հաստատուն կանգնել:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ